

**THE ANNUAL MEMBERSHIP MEETING  
WILL BE HELD ON SUNDAY, MARCH 16, 2025**

Rain/Snow date: Sunday, March 23, 2025

All community members\* are invited to attend the membership meeting.

Five (5) Board of Trustee positions are available – all are incumbents and are up for re-election.

\*In order to vote and/or become a Board of Trustee member or Committee member, you must have paid your membership dues through 2024. New members who joined after August 2024 are **not** eligible to vote or become a Board Member but can still be eligible to be on a committee.

Three (3) Auditing Committee positions are available  
and

Five (5) Nominating Committee positions are available

If you are interested in being elected as a Board member or want to be on one of the committees, please contact the office at:  
(301) 229-8742

If you have any questions, Please contact the office.




*2024 & 2025 Membership Dues* – Parishioners who have not paid their 2024 Annual Membership dues are encouraged to remit payment. 2025 Membership Dues are also accepted now. The membership fees are \$150.00 per adult and \$50.00 for each full time student ages 18-26. These dues are 100 percent tax deductible.

the Pit

**Ս. ԽԱՉ ՀԱՅՑ. ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ  
SOORP KHATCH ARMENIAN  
APOSTOLIC CHURCH**

☞ SUNDAY, MARCH 2, 2025 ☛



ՁԱՅՆ ԴԿ

Բ Ո Ւ Ն Բ Ա Ր Ե Կ Ե Ն Դ Ա Ն  
P O O N P A R E G E N T A N

ՀԱՄԱՍՏԵՂ ՀԱՅ ԴՊՐՈՑԻ  
ՅԱՏՈՒԿ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ 9:30-ԻՆ  
*SPECIAL SERVICE FOR*

*HAMASDEGH ARMENIAN SCHOOL 9:30 a.m.*

Ս. Պատարագ Առ. Ժամը 10:30-ին հեռարձակում

Divine Liturgy 10:30 a.m. Live Streamed

Soorp Khatch Armenian Apostolic Church  
4906 Flint Drive, Bethesda, MD 20816  
Office Hours: 10:00 a.m-2:00 p.m.

Phone: (301) 229-8742; Fax: (301) 229-9393

E-mail: [soorpkhatch@verizon.net](mailto:soorpkhatch@verizon.net)

Web Page: [www.soorpkhatch.org](http://www.soorpkhatch.org)

Archpriest Fr. Sarkis Aktavoukian, Pastor  
Home Phone: (301) 977-1863; Cell: (301) 787-5506

DER VOGHORMIA

All Sick



Parishioners

# ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՀՌՈՄԷԱՅԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ

----- (14 . 7 - 13) -----

Մեզմէ ոեւէ մէկը ինքն իր անձին համար չ'ապրիր, ո՛չ ալ ինքն իրեն համար կը մեռնի: Եթէ կ'ապրինք՝ Տիրոջ համար կ'ապրինք, եւ եթէ կը մեռնինք՝ Տիրոջ համար կը մեռնինք, որ կը նշանակէ թէ՛ ըլլա՛յ կեանքի եւ ըլլա՛յ մահուան մէջ՝ Տիրոջ կը պատկանինք: Ասոր համար ալ Քրիստոս մեռաւ եւ վերակենդանացաւ, որպէսզի Տէրը ըլլայ բոլորին, թէ՛ ապրողներուն եւ թէ՛ մեռածներուն հաւասարապէս: Ինչո՞ւ կը դատես ուրեմն եղբայրդ, կամ ինչո՞ւ զայն կ'արհամարհես: Բոլորս ալ Քրիստոսի ատեանին դիմաց պիտի կանգնինք, որովհետեւ մարգարէութեան մէջ գրուած է.՝

«Ես ինձմով կ'երդնում,- կ'ըսէ Տէրը,-  
որ ամէն ծունկ պիտի խոնարհի առջեւս  
եւ ամէն լեզու պիտի խոստովանի  
թէ ես եմ Աստուածը»:

Քանի ուրեմն մեզմէ իւրաքանչիւրը իր անձին համար հաշիւ պիտի տայ Աստուծոյ, այսուհետեւ դադրի՛նք իրար քննադատալէ, եւ փոխարէնը ջանանք մեր եղբայրներուն գայթակղութեան եւ մեղանշումին պատճառ չդառնալ:

## ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

----- (6 . 1 - 7) -----

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.՝

- Զգո՛յ՛, Աստուծոյ հանդէպ ձեր պարտաւորութիւնները մարդոց ներկայութեան մի՛ կատարէք ցոյցի համար, որովհետեւ այդ պարագային վարձատրութիւն պիտի չստանաք ձեր երկնաւոր Հօրմէն:

- Երբ ողորմութիւն կ'ուզես տալ, փող ու թմբուկով մի՛ ընեն, մարդոց ուշադրութիւնը գրաւելու համար, ինչպէս կեղծաւորները կ'ընեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու վրայ՝ մարդոցմէ փառաւորութելու ակնկալութեամբ: Վստա՛հ եղէք, միայն ատիկա է անոնց վարձատրութիւնը: Ընդհակառակը, երբ դուն ողորմութիւն պիտի տաս, ձախ ձեռքդ թող չգիտնա՛յ թէ ինչ կ'ընէ աջ ձեռքդ: Այսպիսով ողորմութիւնդ գաղտնի բրած կ'ըլլաս, եւ քու երկնաւոր Հայրդ որ անտեսանելի է, բայց կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս:

- Նմանապէս, երբ կ'աղօթես՝ կեղծաւորներուն մի՛ նմանիր, որոնք կը սիրեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու անկիւնները կեցած աղօթել, որպէսզի մարդիկ իրենց աղօթելը տեսնեն: Վստահ

եղէք, միայն ատիկա է անոնց վարձատրութիւնը: Դուն երբ կ'աղօթես՝ մտի՛ր սենեակդ, գոցէ՛ դուռը եւ ծածուկ կերպով աղօթէ քու երկնաւոր Հօրդ: Եւ Հայրդ որ անտեսանելի է ու կը տեսնէ կատարածդ, քեզի պիտի հատուցանէ յայտնապէս:



## SCRIPTURE READINGS



### ROMANS 14:7-13

For none of us lives to himself alone and none of us dies to himself alone. If we live, we live to the Lord; and if we die, we die to the Lord. So, whether we live or die, we belong to the Lord.

For this very reason, Christ died and returned to life so that he might be the Lord of both the dead and the living. You, then, why do you judge your brother? Or why do you look down on your brother? For we will all stand before God's judgment seat. It is written: "'As surely as I live,' says the Lord, 'every knee will bow before me; every tongue will confess to God.'" So then, each of us will give an account of himself to God.

Therefore let us stop passing judgment on one another. Instead, make up your mind not to put any stumbling block or obstacle in your brother's way.

### MATTHEW 6:1-7

Be careful not to do your acts of righteousness before men, to be seen by them. If you do, you will have no reward from your Father in heaven.

So when you give to the needy, do not announce it with trumpets, as the hypocrites do in the synagogues and on the streets, to be honored by men. I tell you the truth, they have received their reward in full. But when you give to the needy, do not let your left hand know what your right hand is doing, so that your giving may be in secret. Then your Father, who sees what is done in secret, will reward you.

And when you pray, do not be like the hypocrites, for they love to pray standing in the synagogues and on the street corners to be seen by men. I tell you the truth, they have received their reward in full. But when you pray, do into your room, close the door and pray to your Father, who sees what is done in secret, will reward you. And when you pray, do not keep on babbling like pagans, for they think they will be heard because of their many words.



## Բ Ո Ւ Ն Բ Ա Ր Ե Կ Ե Ն Դ Ա Ն

Բարեկենդաններուն զլխաւորն է եւ այդպէս կը կոչուի Մեծ Պահքին նախորդող ուտիքի (այն օրերը, որ կարելի է ուտել ամէն բան) վերջին Կիրակին: Մեծ Պահքը եօթը շաբաթներու (48 օր) վրայ երկարած գոտող անընդհատ պահքն է:

Այդ օրուան կերակուրներուն ուրիշ օրերէն ու միւս բարեկենդաններէն աւելի հոխ եւ տեսակաւոր ըլլալուն, կոչուած է «Բուն Բարեկենդան», իսկ նախորդող շաբաթը՝ «Բուն Բարեկենդանի Շաբաթ»: Այդ շաբթուան մէջ կը յիշատակուին Սրբոց Ղեւոնդեանց Քահանայից եւ Սրբոց Վարդանանց Նահատակներուն տօները:

Բուն Բարեկենդանը Զատիկէն եօթը շաբաթ առաջ կուգայ եւ Զատիկուան պէս ունի 35 օրուան շարժականութիւն՝ Փետրուար 28-էն մինչեւ Ապրիլ 3:

Շաբաթ օր, Մեծ Պահքի ապաշխարութեան երգերով կը փակուի եկեղեցւոյ վարագոյրը եւ Կիրակի օրուան տխուր շարականներուն հետ ժողովուրդը կը վայելէ համադամ կերակուրներու հաշակումը: Բուն Բարեկենդանի Կիրակին կը խորհրդանշէ մեր նախահայրերուն դրախտային երջանիկ կեանքը:

## POON PAREGENTAN

*Poon Paregentan* ushers the faithful into the Lenten period of fasting, penance and reconciliation. During Lent the Church takes on a solemn appearance. The altar curtain is closed beginning on the eve of *Poon Paregentan*, symbolic of the expulsion of Adam and Eve from the Garden of Eden. Holy Communion is not offered during Lent and the faithful are encouraged to use this period leading to Easter as a time to strengthen their faith.

Great Lent (*Medz Bahk or Karasnortk*) begins this Monday, March 3. Great Lent is the longest of the fasts in the liturgical calendar. It begins on the Monday immediately following *Poon Paregentan*, and continues for 40 days until the Friday before the commemoration of the raising of Lazarus on the Saturday before Palm Sunday. A new period of fasting begins during Holy Week.

## Այս տարի Հոգեհանգիստ կարելի չէ կատարել հետեւալ տաղաւար տօներուն.

- Կիրակի, Ապրիլ 13.....Ծաղկազարդ
- Կիրակի, Ապրիլ 20.....Ս. Զատիկ
- Կիրակի, Յուլիս 27.....Այլակերպութիւն Քրիստոսի
- Կիրակի, Օգոստոս 17.....Սուրբ Աստուածածին
- Կիրակի, Սեպտեմբեր 14.....Խաչվերաց

## NO HOKEHANKISD SERVICES ON FEAST SUNDAYS:

April 13.....	Palm Sunday
April 20.....	Easter Sunday
July 27.....	Feast of the Transfiguration
August 17.....	Assumption of the Holy Mother of God
September 14.....	Exaltation of the Holy Cross



*2023 & 2024 Membership Dues* – Parishioners who have not paid their 2023 Annual Membership dues are encouraged to remit payment. 2024 Membership Dues are also accepted now. The membership fees are \$150.00 per adult and \$50.00 for each full time student ages 18-26. These dues are 100 percent tax deductible.



## LENT OBSERVANCE

In observance of Lent and Holy Week, we will be serving only coffee during Sunday coffee hour. However, we will gladly serve **Lenten** pastries or foods that families bring for Hokehankisd (No Meat, Poultry and Dairy Products). Please keep this in mind when you schedule Hokehankisd services.

We thank you for supporting us in upholding our church traditions.

## ՀՍԿՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Հսկումի արարողությունը կ'ընդգրկէ երկու ժամերգութիւններ, որոնք բաղկացած են Տէրունական աղօթքէ, սաղմոսներէ, մաղթանքներէ, քարոզներէ, աղօթքներէ եւ շարականներէ:

1. *Խաղաղական ժամերգութիւն, որ ուղղուած է Հոգի Աստուծոյ եւ կը խորհրդանշէ Քրիստոսի զժոխք իջնելն ու արդարներու տանջանքներուն դադարեցումը: Այս ժամերգութիւնը կը կատարուէր մայրամուտէն ետք: Նպատակն է անդորրութիւն եւ խաղաղութիւն բերել ամենօրեայ մեղքերով ծանրաբեռնուած մարդու հոգիին:*
2. *Հանգստեան ժամերգութիւն, ուղղուած է Հայր Աստուծոյ: Ինչպէս այսօր, նախապէս ալ այս ժամերգութիւնը շարունակութիւնը եղած է Խաղաղական ժամերգութեան. նպատակն է հանգիստ քուն պարգեւել մարդուն: Կը կատարուի քնանալէն առաջ:*



## LENTEN VESPER SERVICE

The vigil service includes two services which consists of the Lord's Prayer, psalms, supplications, exhortations, prayers, and hymns.

1. The Peace Hour service, which is addressed to the Holy Spirit and symbolizes the descent of Christ into hell and the cessation of the sufferings of the righteous. This service was held after sunset. The goal is to bring peace and tranquility to the soul of a person burdened with daily sins.
2. Rest Hour service, addressed to God. Today, this service has been a continuation of the Peace Hour service. The goal is to give a person a good night's sleep. It is done before going to bed.



## SUNDAYS OF GREAT LENT

First Sunday	3-02-2025	Poon Paregentan
Second Sunday	3-09-2025	Expulsion
Third Sunday	3-16-2025	The Prodigal Son
Fourth Sunday	3-23-2025	The Steward
Fifth Sunday	3-30-2025	The Judge
Sixth Sunday	4-06-2025	Advent
	4-13-2025	Palm Sunday
	4-20-2025	Easter

## ՄԵԾ ՊԱՀՔԻ ԿԻՐԱԿՆԵՐԸ

Առաջին Կիրակի	3-02-2025	Բուն Բարեկենդան
Երկրորդ Կիրակի	3-09-2025	Արտաքսման Կիրակի
Երրորդ Կիրակի	3-16-2025	Անառակի Կիրակի
Չորրորդ Կիրակի	3-23-2025	Տնտեսի Կիրակի
Հինգերորդ Կիրակի	3-30-2025	Դատաւորի Կիրակի
Վեցերորդ Կիրակի	4-06-2025	Գալստեան Կիրակի
	4-13-2025	Ծաղկազարդ
	4-20-2025	Ս. Զատիկ

## 2025 LENTEN VESPER SERVICES

- |                    |  |
|--------------------|--|
| 1. Friday, Mar. 7  | 7 PM followed by Seniors Group Dinner                |
| 2. Friday, Mar. 14 | 7 PM followed by School Dinner                       |
| 3. Friday, Mar. 21 | 7 PM followed by Homenetmen Dinner                   |
| 4. Friday, Mar. 28 | 7 PM followed by Ladies Guild Dinner/ <i>Michink</i> |
| 5. Friday, Apr. 4  | 7 PM followed by AYP Dinner                          |
| 6. Friday, Apr. 11 | 7 PM followed by ARS Dinner                          |

## LENT OBSERVANCE

In observance of Lent and Holy Week, we will be serving only coffee during Sunday coffee hour. However, we will gladly serve **Lenten** pastries or foods that families bring for Hokehankisds (No Meat, Poultry and Dairy Products). Please keep this in mind when you schedule Hokehankisd services.

We thank you for supporting us in upholding our church traditions.



*The Altar curtains will be closed starting Sunday, March 2, Poon Paregentan (Great Lent) until Palm Sunday.  
No Altar flowers are needed during Lent.*

✠ ✠ ✠ **HOKEHANKISD** ✠ ✠ ✠

**ARCHPRIEST FR. GHEVONT AKTAVOUKIAN** (36<sup>th</sup> Anniversary)  
**YERETSGIN BAYDZAR AKTAVOUKIAN** (15<sup>th</sup> Anniversary)  
**AVEDIS AKTAVOUKIAN** (68<sup>th</sup> Anniversary)  
**FLORA AKTAVOUKIAN** (47<sup>th</sup> Anniversary)  
**ISKOUHI MEGERDICHIAN** (47<sup>th</sup> Anniversary)  
**HAROOTIUNE MEGERDICHIAN**  
**MISSAK HAROUTIUNIAN**  
**KAPRIEL HAROUTUNIAN**  
**ISKOUHI HAROUTIUNIAN**  
**HOVHANNES HAROUTIUNIAN**  
**KRIKOR HAROUTIUNIAN**  
**KHACHIG HAROUTIUNIAN**  
**ANNA HAROUTIUNIAN**  
**HAROUTIUNE HAROUTIUNIAN**  
**KAPRIEL HAROUTIUNIAN** (15<sup>th</sup> Day)  
**DR. KEVORK MARKARIAN** (15<sup>th</sup> Anniversary)  
**ZAROUHI DOORSOONIAN** (13<sup>th</sup> Anniversary)  
**AVEDIS BETCHAKJIAN**  
**SOSSIE BETCHAKJIAN LAKHOYAN** (12<sup>th</sup> Anniversary)  
**HOVSEP BETCHAKJIAN** (10<sup>th</sup> Anniversary)  
**RAFFI BETCHAKJIAN** (9<sup>th</sup> Anniversary)  
**TAKOUHI BETCHAKJIAN** (1<sup>st</sup> Anniversary)  
**VAROUJ TOVMASSIAN** (9<sup>th</sup> Anniversary)  
**KEVORK KAHVEJIAN** (9<sup>th</sup> Anniversary)  
**ZADIG DOORSOONIAN**  
**HOVHANNES DOORSOONIAN**

Requested by: Der Hayr and Board of Trustees  
Archpriest Rev. Fr. Sarkis and Yn. Maggie Aktavoukian  
Sako and Shoghag Aktavoukian

**NAIRY JAKMAKJIAN ARABSAYESSIAN** (7<sup>th</sup> Day)

Requested by: Der Hayr and Board of Trustees  
Vartan & Ani Jackmakjian and Anto & Galy  
Kevork & Nayri Jackmakjian  
Diran & Talar Arslanian & Family  
Hovsep & Sylvie Avakian and Family

✠ ✠ ✠ **HOKEHANKISD** ✠ ✠ ✠

**HOREM (HRIPSIME) KARAIAN** (40<sup>th</sup> Day)

Requested by: Der Hayr and Board of Trustees  
Istipan Karaian  
John Karaian

**GABRIELE ABKARIAN** (2<sup>nd</sup> Anniversary)

Requested by: Der Hayr and Board of Trustees  
Zabel Abkarian  
Hovig & Nayiri Apkarian & Family  
Vatche & Maral Abkarian & Family  
Lena Kachechian & Family  
Kapo & Meghree Apkarian & Family  
Talar & Juan DeLaossa  
Shogheeg & Njteh Bourjlian  
Ara Abkarian & Family  
Razmig Abkarian & Family  
Madlen Megerdichian & Family  
Sona Kohler & Family

**ANNA TOMASKESIS**  
**KRIKOR TOMASKESIS**  
**SANDUHT KARABULUT**  
**HAYRABET KARABULUT**

Requested by: Der Hayr and Board of Trustees  
Hrayr & Akabi Atamian and Family  
Markar & Anna Derthomasian and Family

**CONTINUED →**

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ**  
**ՀՌՈՄԷԱՅԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ**

- - - - - (13 . 11 - 14 . 25) - - - - -

Սիրոյ այս սկզբունքով ընթացէ՛ք, գիտնալով թէ ի՛նչ ժամանակի մէջ կ'ապրինք: Ժամանակն է որ քունը թօքափենք եւ արթննանք, որովհետեւ հիմա փրկութիւնը աւելի մօտ է մեզի, քան այն ատեն՝ երբ հաւատացինք: Գիշերը անա կ'անցնի եւ ցերեկը մօտ է: Ուստի խաւարի գործերէն հեռանանք եւ լոյսի զէնքերը մեր վրայ առնենք, ապրելու համար այնպէս՝ ինչպէս վայել է լոյսի մէջ քայլողներուն, փոխանակ անառակութեամբ, արեւցոյթեամբ, խառնակեցութեամբ ու պղծութեամբ, կամ նախանձով ու հակառակութեամբ ապրելու: Տէր Յիսուս Քրիստոսի նկարագիրը ձեր վրայ առէ՛ք, եւ մարմնի ցանկութիւնները կատարելու հետամուտ մի՛ ըլլա՛ք:

Հաւատքի մէջ տկարացած մէկը ընդունեցէ՛ք առանց իր խիղճը տանջող կասկածները քննադատելու: Օրինակ, մէկը կը հաւատայ՝ թէ ամէն ինչ կարելի է ուտել: Ուրիշ մը, որ կասկած ունի այդ մասին, բանջարեղէն կ'ուտէ միայն: Ամէն ինչ ուտողը թող շահամարհէ շուտողը, իսկ շուտողը թող չքննադատէ ուտողը, որովհետեւ Աստուած զայն ընդունեալ է: Ո՞վ եւ դուն, որ Աստուծոյ ծառան կը դատես: Տէրը ի՛նք միայն գիտէ՝ իր հաւատքին մէջ կանգո՞ւն է անիկա, թէ ինկած: Բայց վստահ եղի՛ք որ կանգուն պիտի մնայ, որովհետեւ Տէրը կրնայ զայն կանգուն պահել:

Նոյնպէս, ոմանք կը խորհին՝ թէ զԱստուած պաշտելու համար այսինչ օրը աւելի կարեւոր է քան միւս օրը, մինչ ուրիշներու համար բոլոր օրերը նոյնն են: Իւրաքանչիւրը թող իր համոզումը պահէ: Կը բաւէ որ թէ՛ յատուկ օր մը փնտռողը եւ թէ՛ օրերու միջեւ խտրութիւն չդնողը երկուքն ալ Տէրը պատուել կը խորհին: Նոյնպէս ալ, թէ՛ ամէն ինչ ուտողը Տէրը կը պատուէ եւ թէ՛ շուտողը, երբ երկուքն ալ Աստուծոյ գոհութիւն կը յայտնեն:

Մեզմէ ոեւէ մէկը ինքն իր անձին համար չ'ապրիր, ո՛չ ալ ինքն իրեն համար կը մեռնի: Եթէ կ'ապրինք՝ Տիրոջ համար կ'ապրինք, եւ եթէ կը մեռնինք՝ Տիրոջ համար կը մեռնինք, որ կը նշանակէ թէ՛ ըլլա՛յ կեանքի եւ ըլլա՛յ մահուան մէջ՝ Տիրոջ կը պատկանինք: Ատոր համար ալ Քրիստոս մեռաւ եւ վերակենդանացաւ, որպէսզի Տէրը ըլլայ բոլորին, թէ՛ ապրողներուն եւ թէ՛ մեռածներուն հաւասարապէս: Ինչո՞ւ կը դատես ուրեմն եղբայրդ, կամ ինչո՞ւ զայն կ'արհամարհես: Բոլորս ալ Քրիստոսի ատեանին դիմաց պիտի կանգնինք, որովհետեւ մարգարէութեան մէջ գրուած է.-

«Ես ինձմով կ'երդնում,- կ'ըսէ Տէրը,-  
որ ամէն ծունկ պիտի խոնարհի առջեւս  
եւ ամէն լեզու պիտի խոստովանի  
թէ ես եմ Աստուածը»:

Քանի ուրեմն մեզմէ իւրաքանչիւրը իր անձին համար հաշիւ պիտի տայ Աստուծոյ, այստեղեւ դադրի՛նք իրար քննադատելէ, եւ փոխարէնը ջանանք մեր եղբայրներուն գայթակղութեան եւ մեղանշումին պատճառ չդառնալ:

Յիսուս Քրիստոսով հետեւեալը ապահովապէս գիտեմ, թէ ինքնին պիղծ բան չկայ: Բան մը պիղծ կ'ըլլայ ա՛յն մարդուն համար, որ զայն պիղծ կը համարէ: Եթէ գիտես թէ քու ուտելովդ եղբօրդ խղճմտանքը կը վիրաւորես, սիրով շարժած չես ըլլա՛ր՝ երբ ուտես: Քու կերակուրովդ պատճառ մի՛ դառնար որ կորսուի եղբայրդ, որուն համար Քրիստոս իր կեանքը տուաւ: Առիթ մի՛ տար որ բարի եւ ուղիղ սեպած բանդ հայեցողութեան պատճառ դառնայ: Որովհետեւ Աստուծոյ արհայութիւնը կերակուր կամ ըմպելիք չէ, այլ՝ արդարութիւն, խաղաղութիւն եւ խնդութիւն՝ Սուրբ Հոգիէն տրուած: Եւ ով որ ասոնցմով կը ծառայէ Քրիստոսի, անիկա Աստուծոյ հանելի եւ մարդոց գովելի կ'ըլլայ:

Արդ, այստեղեւ խաղաղութիւն փնտռենք եւ աշխատինք իրարու հաւատքը ամրապնդել: Զըլլա՛յ որ կերակուրի պատճառով Աստուծոյ գործը քանդես: Ամէն բան ինքնին մահուր է. բայց սխալ է բան մը ուտել, երբ ատիկա ուրիշ մը կը գայթակղեցնէ: Աւելի ճիշդ է՝ ո՛չ միւս ուտել, ո՛չ գինի խմել, ո՛չ ալ ուրիշ ոեւէ բան ընել՝ որով եղբայրդ կը գլորի կամ կը գայթակղի կամ կը տկարանայ: Այս մասին քու համոզումդ՝ քու եւ Աստուծոյ միջեւ թող մնայ: Երանի՛ անոր որ ինքզինքը դատապարտութեան չ'ենթարկեր այնպիսի բաներով՝ որով իր ընկերոջ փորձութեան պատճառ կ'ըլլայ: Միւս կողմէ, եթէ մէկը կասկած ունի իր կերածին անմահութեան մասին, Աստուծոյ դատապարտութեան ենթակայ է՝ եթէ ուտէ, որովհետեւ իր արարքը հաւատքի արդիւնք չէ: Եւ ինչ որ հաւատքէն չի գար՝ մեղք է:

## ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆՔՆ

### ԸՍՏ ՄԱՏԹՔՆՈՍԻ

----- (6 . 1 - 21) -----

Զգո՛յշ, Աստուծոյ հանդէպ ձեր պարտաւորութիւնները մարդոց ներկայութեան մի՛ կատարե՛ք ցոյցի համար, որովհետեւ այդ պարագային վարձատրութիւն պիտի չստանա՛վ ձեր երկնաւոր Հօրմէն:

Երբ ողորմութիւն կ'ուզես տալ, փող ու թմբուկով մի՛ ընե՛ր՝ մարդոց ուշադրութիւնը գրաւելու համար, ինչպէս կեղծատրոնները կ'ընեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու վրայ՝ մարդոցմէ փառատրուելու ակնկալութեամբ: Վստա՛ն եղե՛ք, միայն ատիկա է անոնց վարձատրութիւնը: Ընդհակառակը, երբ դուն ողորմութիւն կու տաս, ձախ ձեռքդ թող չգիտնա՛յ թէ ինչ կ'ընէ աջ ձեռքդ: Այսպիսով ողորմութիւնդ գաղտնի ըրած կ'ըլլաս, եւ քու երկնաւոր Հայրդ, որ անտեսանելի է եւ կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս:

Նմանապէս, երբ կ'աղօթես՝ կեղծատրոններուն մի՛ նմանիր, որոնք կը սիրեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու անկիւնները կեցած աղօթել, որպէսզի մարդիկ իրենց աղօթելը տեսնեն: Վստահ եղե՛ք, միայն ատիկա է անոնց վարձատրութիւնը: Դուն երբ կ'աղօթես՝ մտի՛ր սեմեակդ, գոցե՛ր դուռը եւ ծածուկ կերպով աղօթէ քու երկնաւոր Հօրդ: Եւ Հայրդ որ անտեսանելի է ու կը տեսնէ կատարածդ, քեզի պիտի հատուցանէ յայտնապէս:

Տակաւին, երբ կ'աղօթե՛ք, մի՛ շատախօսե՛ք հեթանոսներուն նման, որոնք կը կարծեն որ եթէ շատ խնդրեն՝ լսելի պիտի դառնան: Արդ, մի՛ նմանի՛ք անոնց, որովհետեւ ձեր Հայրը գիտէ ինչ որ պէտք է ձեզի, նոյնիսկ երբ տակաւին իրմէ խնդրած չէ՛ք: Ուրեմն այսպէս աղօթեցե՛ք.-

Հայր մեր երկնաւոր,  
սրբաբանուի՛ անունդ.  
թող զայ արհայոթիւնդ,  
թող կատարուի քու կամքդ,  
ինչպէս որ երկինքի մէջ՝  
այնպէս ալ երկրի վրայ:  
Ամենօրեայ մեր հացը  
այսօր եւս մեզի տու:  
Ներէ՛ մեր յանցանքները,  
ինչպէս որ մենք կը ներենք  
անոնց՝ որոնք մեզի դէմ  
նոյնպէս յանցանք գործած են:  
Եւ թոյլ մի՛ տար  
որ փորձութեան մէջ իյնանք.  
այլ մեզ շարէն ազատէ՛:  
Որովհետեւ քուկդ են միշտ  
արհայոթիւնը, զօրութիւնը եւ փառքը: Ամէն:

Որովհետեւ եթէ մարդոց ներքէ իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի ներէ ձեզի: Իսկ եթէ մարդոց շնե՛րէ՛ք իրենց յանցանքները, ձեր Հայրն ալ պիտի չներէ ձեր յանցանքները:

Երբ ծով կը պահե՛ք, տրտումներս մի՛ ըլլա՛վ կեղծատրոնե՛րուն նման, որոնք իրենց երեսը կը կախեն, որպէսզի մարդոց ցոյց տան թէ ծով կը պահեն: Վստահ եղե՛ք, միայն ատիկա է անոնց վարձատրութիւնը:

Ընդհակառակը, երբ դուն ծով կը պահես, օժե՛ գլուխդ եւ լուա՛ երեսդ, որպէսզի մարդիկ չտեսնեն թէ ծով կը պահես, այլ՝ միայն Հայրը, որ անտեսանելի է. եւ Հայրդ, որ կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս:

Ձեր հարստութիւնը մի՛ դիզե՛ք երկրի վրայ, ուր ցեցն ու ժանգը կը փնացնեն եւ կամ գողերը պատը քանդելով ներս կը մտնեն ու կը գողնան զայն: Այլ ձեր հարստութիւնը դիզեցե՛ք երկինքի մէջ, ուր ցեցն ու ժանգը չեն կրնար փնացնել զայն, եւ ոչ ալ գողերը կրնան պատը քանդելով ներս մտնել եւ գողնալ: Որովհետեւ ձեր հարստութիւնը ո՛ր որ է, հոն կ'ըլլայ նաեւ ձեր սիրտը:



## SCRIPTURE READINGS



### ROMANS 13:11-14-25

Besides this, you know what time it is, how it is now the moment for you to wake from sleep. For salvation is nearer to us now than when we became believers; the night is far gone, the day is near. Let us then lay aside the works of darkness and put on the armor of light; let us live honorably as in the day, not in reveling and drunkenness, not in debauchery and licentiousness, not in quarreling and jealousy. Instead, put on the Lord Jesus Christ, and make no provision for the flesh, to gratify its desires.

Welcome those who are weak in faith, but not for the purpose of quarreling over opinions. Some believe in eating anything, while the weak eat only vegetables. Those who eat must not despise those who abstain, and those who abstain must not pass judgment on those who eat; for God has welcomed them. Who are you to pass judgment on servants of another? It is before their own lord that they stand or fall. And they will be upheld, for the Lord is able to make them stand.

Some judge one day to be better than another, while others judge all days to be alike. Let all be fully convinced in their own minds. Those who observe the day, observe it in honor of the Lord. Also those who eat, eat in honor of the Lord, since they give thanks to God; while those who abstain, abstain in honor of the Lord and give thanks to God.

We do not live to ourselves, and we do not die to ourselves. If we live, we live to the Lord, and if we die, we die to the Lord; so then, whether we live or whether we die, we are the Lord's. For to this end Christ died and lived again, so that he might be Lord of both the dead and the living.

Why do you pass judgment on your brother or sister? Or you, why do you despise your brother or sister? For we will all stand before the judgment seat of God. For it is written, "As I live, says the Lord, every knee shall bow to me, and every tongue shall give praise to God." So, then, each of us will be accountable to God.

Let us therefore no longer pass judgment on one another, but resolve instead never to put a stumbling block or hindrance in the way of another. I know and am persuaded in the Lord Jesus that nothing is unclean in itself; but it is unclean for anyone who thinks it unclean. If your brother or sister is being injured by what you eat, you are no longer walking in love. Do not let what you eat cause the ruin of one for whom Christ died. So do not let your good be spoken of as evil. For the kingdom of God is not food and drink but righteousness and peace and joy in the Holy Spirit. The one who thus serves Christ is acceptable to God and has human approval. Let us then pursue what makes for peace and for mutual upbuilding. Do not, for the sake of food, destroy the work of God. Everything is indeed clean, but it is wrong for you to make others fall by what you eat; it is good not to eat meat or drink wine or do anything that makes your brother or sister stumble. The faith that you have, have as your own conviction before God. Blessed are those who have no reason to condemn themselves because of what they approve. For those who have doubts are condemned if they eat, because they do not act from faith; for whatever does not proceed from faith is sin.



## SCRIPTURE READINGS



### MATTHEW 6:1-21

"Beware of practicing your piety before men in order to be seen by them; for then you will have no reward from your Father who is in heaven.

"Thus, when you give alms, sound no trumpet before you, as the hypocrites do in the synagogues and in the streets, that they may be praised by men. Truly, I say to you, they have their reward. But when you give alms, do not let your left hand know what your right hand is doing, so that your alms may be in secret; and your Father who sees in secret will reward you. But when you give alms, do not let your left hand know what your right hand is doing, so that your alms may be in secret; and your Father who sees in secret will reward you.

"And when you pray, you must not be like the hypocrites; for they love to stand and pray in the synagogues and at the street corners, that they may be seen by men. Truly, I say to you, they have their reward. But when you pray, go into your room and shut the door and pray to your Father who is in secret; and your Father who sees in secret will reward you.

"And in praying do not heap up empty phrases as the Gentiles do; for they think that they will be heard for their many words. Do not be like them, for your Father knows what you need before you ask him. Pray then like this:

"Our Father who art in heaven, Hallowed be thy name. Thy kingdom come, Thy will be done, on earth as it is in heaven. Give us this day our daily bread; and forgive us our debts, as we also have forgiven our debtors; And lead us not into temptation, but deliver us from evil.

"For if you forgive men their trespasses, your heavenly Father also will forgive you; but if you do not forgive men their trespasses, neither will your Father forgive your trespasses.

"And when you fast, do not look dismal, like the hypocrites, for they disfigure their faces that their fasting may be seen by men. Truly, I say to you, they have their reward. But when you fast, anoint your head and wash your face, that your fasting may not be seen by men but by your Father who is in secret; and your Father who sees in secret will reward you.

"Do not lay up for yourselves treasures on earth, where moth and rust consume and where thieves break in and steal, but lay up for yourselves treasures in heaven, where neither moth nor rust consumes and where thieves do not break in and steal. For where your treasure is, there will your heart be also."